ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

29 հոկտեմբերի 2018թ N47 –Ն

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ, 19 և 20 -րդ կետերի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 14-րդ հոդվածների կետերի պահանջներով

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1 . Կողբ համայնքում 2019թ. սահմանել տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

ա/ համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար.

բ/ համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար.

գ/ համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար.

դ/ համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար.

ե/ համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար.

գ/ համայնքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.

Է/ համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար.

ը/ համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.

թ/ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար.

ժ/ համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.

ժա/ համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.

ժբ/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.

ժգ/ համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար.

ժդ/ համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար:

2 . Կողբ համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ տեսակները.

ա/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

բ / տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

գ/ Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար.

դ/Աղբահանության աշխատանքը կազմակերպելու համար՝աղբահանության վճար

3 . Կողբ համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1 . Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բ/ սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10.000 դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բգ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20.000 դրամ.

բդ/ 3001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ

2 .համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<ա>> ենթակետի սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3 . Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 3000 դրամ:

4 . Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ . Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր համար՝ եռամսյակի

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000դրամ,

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000դրամ,

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000դրամ,

ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000դրամ,

զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ,

2/ . Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500դրամ,

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500դրամ,

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500դրամ,

ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000դրամ,

զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000:

5. Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 500 դրամ՝ 1 քառակուսի մետրի համար,

բ/ Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանվում է 200.000 դրամ,

գ/. Խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 20.000 դրամ,

գա / համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2500դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 3500դրամ,

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 7000դրամ,

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10000դրամ,

ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15000դրամ,

գ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000,

Ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 500դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000դրամ,

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2000դրամ,

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4000դրամ,

ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 8000դրամ,

զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000,

5[1]. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 50.000 դրամ.

6 . Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ.

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

գ/ բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ.

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 դրամ.

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000դրամ.

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ:

7 . Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

դ/ սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

7.1. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա տեղական բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

8 . Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000 դրամ:

9.Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50.000 դրամ:

10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 2000 դրամ:

11.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

12.Սույն որոշման 1-ին կետի ժդ/ ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա/ 3հա-ից մինչև 5հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝750 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

բ/ 5հա-ից մինչև 7հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝1.500 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

գ/ 7հա-ից մինչև 10հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝2. 100 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

դ/ 10հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝3.000 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

13 .Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման, ինչպես նաև

շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար է սահմանվում 1000 դրամ:

14. Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար է սահմանվում 1000 դրամ:

15. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմիվ միջոցյթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանվում է մասնակիցների վճար՝ 1000 դրամ:

16. Մանկական երաժշտական դպրոցում՝

1/. դասատուների դրույքաչափ սահմանել 72751 դրամ՝

2/. ժող.նվագարանների ուսուցման մեջ ընդգրկված դասատուների դրույքաչափ՝ - 96000դրամ

3/. մեկ երեխայի ամսական վարձավճար սահմանել՝

ա/. դաշնամուրի բաժնում --3000 դրամ

բ/. ժողովրդական նվագարանների և կլարնետի վճարովի բաժիններում -- 2000դրամ:

4/. Համաձայնել երաժշտական դպրոցի տնօրենի առաջարկին՝երկրորդ գործիք սովորող աշակերտներից լրացուցիչ ուսման վարձ չգանձելու մասին:

17. Կողբի թիվ N1, N2 և Զորականի մանկապարտեզներում մեկ երեխայի ամսեկան վարձավճար սահմանել 4000դրամ:

18.Համայնքում աղբահանության վճար սահմանել՝

1/Կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50 դրամ,

2/ Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝մեկ խորանարդ մետր աղբի համար՝250դրամ,կամ

բ. ըստ զանգվածի՝մեկ տոննա աղբի համար՝500դրամ:

3/ Առևտրի /այդ թվում շուկաների/. Հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների համար՝1քառ.մետրի համար՝35դրամ,

4/ Հյուրանոցների և հյուրանոցային ծառայությունների համար՝1քառ.մետրի համար՝15դրամ,

5/ Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար՝1քառ.մետրի համար՝6դրամ,

6/Կրթական,մշակութային, առողջապահական,սպորտային, գիտահետազոտական շինությունների համար՝1քառ.մետրի համար՝4դրամ:

19.Տեղական տուրքի և (կամ) տեղական վճարի արտոնություններ համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ տեղական տուրք կամ վճար վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարելով տեղական տուրքը կամ տեղական վճարը:

20. Տեղական տուրքի և (կամ) տեղական վճարի ավել մուծված գումարները ենթակա են վերադարձման՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողի դիմումի հիման վրա՝ դիմումը տալուն հաջորդող 30 օրվա ընթացում:

Տեղական տուրքը և (կամ) վճարը ենթակա է վերադարձման՝ մասնակի կամ լրիվ, եթե՝

ա/տեղական տուրքը և (կամ) վճարը վճարվել է ավելի, քան սահմանել է համայնքի ավագանին.

բ/ տեղական տուրք կամ վճար գանձող մարմինը մերժել է համապատասխան գործողությունների կատարումը կամ վճարողներին է վերադարձրել նրանց դիմումները:

21 . Տեղական տուրք կամ վճար սահմանելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումները կարող են գանգատարկվել դատարան:

22 .Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և գործում է մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

Որոշումը քվեարկությամբ ընդունվեց՝

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ	Կողմ ----------	Դեմ ----------	Չեռնպահ ----------
ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ	Կողմ ----------	Դեմ ----------	Չեռնպահ ----------
ԱԲՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ	Կողմ ----------	Դեմ ----------	Չեռնպահ ----------
ԲԱՂԻՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ	Կողմ ----------	Դեմ ----------	Չեռնպահ ----------
ԱԶԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ	Կողմ ----------	Դեմ ----------	Չեռնպահ ----------
ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ	Կողմ ----------	Դեմ ----------	Չեռնպահ ----------
ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ	Կողմ ----------	Դեմ ----------	Չեռնպահ ----------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ Կողմ ---------- Դեմ ---------- Ձեռնպահ ----------

ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ Կողմ ---------- Դեմ ---------- Ձեռնպահ ----------

Կողմ -- 6
Դեմ -- 0
Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ

29.10.2018թ